«Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանակներից:

Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնական գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ»:

Ներառականության հարցը պետք է նախ և առաջ դիտարկվի 1990 թվականին Ջոնթիեկում ընդունված «Կրթություն բոլորի համար» համաշխարհային հռչակագրի համատեքստում, որի 6 նպատակներից 2-ը հետևյալն են. համընդհանուր ընդգրկվածությունը և հավասարությունը՝ որպես թիրախ:

Ներառականության սկզբունքը սահմանված է 2005 թվականին ընդունված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքում, որը կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան, կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Համաձայն օրենքի՝ «ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»:

Ներառական կրթությունը նպաստավոր է թե՛ կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ սովորողների իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է, երբ շահում է երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը:

Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը որոշվում է իր ցանկությամբ և նրան տրվում է հնարավորություն բացահայտվելու՝ իր բոլոր ունակություններով, և

գրսևորվելու՝ իր համար հաղթահարելի ձևով: Ներառական կրթության հիմնում ընկած է այն մտեցումը, որ, երեխան ունի ոչ թե «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով կրթությանը լիարժեք մասնակցելու «դժվարություններ»: Դա կարող է լինել, ֆիզիկական միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդները, ուսուցողական հարմարեցված նյութերը և այլն:

Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամփյց կամ իր երեխայի հետ միջավայրի շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության վիճակից ու ամօրի բարդությանից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը:

Ներառական կրթության պարագայում, պետությունը աստիճանաբար իրականացնում է սոցիալական հավասարության ապահովման խնդրում իր դերակատարումը՝ նվազեցնում է հասարակության շեղումները ու նպաստում նրա հոգեբանական առողջացմանը, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու համար:

Երեխաների շրջանում իրավահավասարության ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինֆուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Ի վերջո ներառական կրթությունը նպաստում է երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացմանը՝ համաշխարհային զարգացման ժամանակակից միտումներին և մարտահրավերներին համաձայն:

Ասպիտով, ներառական կրթությունը, ենթադրում է հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացկամ, երեխաների առողջության համար ապահով ու անվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն սեւալական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ՝

- հաշմանդամություն ունեցող երեխաների.
- բռնության ենթարկվող երեխաների.
- աշխատող երեխաների.
- փախստական կամ տեղահանված երեխաների.
- միգրանտներին.
- ծայրահեղ չֆավորության մեջ ապրող երեխաների.
- Ազգային կամ լեզվական փոքրամասնությունների երեխաների.
- հակամարտությունների գոտիների երեխաների.
- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հետևանքները կրող երեխաների և այլն:

Ուսումնական հաստատությունում բոլոր երեխաների մոտ պետք է ձևավորվեն այնպիսի հմտություններ, վերաբերմունք և արժեհամակարգ, ինչը նրանց թույլ կտա հաստատությունն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրենց լիովին գրսևորել և ինֆնաիրացվել:

Հավասարության սկզբունքը իր մեջ ներառում է նաև տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր կարգավիճակի ընտանիքների երեխաների հավասարությունը: Հայաստանի, ինչպես և ընդհանրապես ժողովրդավարական պետությունների օրենսդրությունները, ամրագրում են սեռերի հավասար իրավունքները, պարտականությունները և ազատությունները: Սեռերի հավասարության սկզբունքներն ամրագրված են ՀՀ մի շարք օրենքներում, ինչպես նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, որտեղ նշված է, որ աշխատանքային հարաբերությունների կողմերը իրավահավասար են՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, ամուսնական վիճակից, ընտանեկան դրությունից և աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Հաստատությունում ներառական կրթության և սովորողների միջև հավասարության ապահովման ինֆրագնահատումն ուղղված է բացահայտելու, թե արդյո՞ք հաստատությունն ապահովում է ակնկալվող հետևյալ արդյունքները՝

- հաստատություն ընդունվելու և հաստատությունում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների համար՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ:

Հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշները և չափանիշները հետևյալ են՝

Հաստատությունը կարևորում է ներառական կրթությունը.

1. ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում.
2. հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ.
3. հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին.
4. հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ.
5. հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:

Հաստատության աշխատակազմը արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում.

6. վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստումների.
7. հաստատությունն ունի ներառական կրթության ուղղությամբ վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը:

Հաստատությունն ունի բավարար ռեսուրսներ՝ աջակցելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սովորելուն և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին.

8. հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղափոխման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն.
9. հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամակավարժական աջակցության թիւն (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն).

10. հաստատությունում առկա են բավարար ֆանակի և որակի ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար.
11. հաստատությունում առկա են բավարար ֆանակի և որակի ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար.
12. հաստատության դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն.
13. հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար.
14. հաստատության ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
15. հաստատության ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և տոկոսը:

Հաստատությունը տեղյակ է դասարանական և արտադասարանական աշխատանքներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հավասար մասնակցությանը խոչընդոտող հանգամանակներից և մեակել ու իրականացնում է դրանք վերացնելու միջոցառումների պլան.

16. հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (քեֆահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները.
17. հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները:

Ուսուցիչները կարողանում են հարմարեցնել ուսումնական ծրագիրը, դասի պլանն ու ուսուցանման գործընթացը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին և մշտապես խրախուսում են նրանց.

18. Անհատական ուսումնական պլանները (ԱՈԻՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը.
19. ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ.
20. ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր.
21. ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից.

22. ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի.

23. հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք.

24. հաստատությունից հեռացած/ուսումն անավարտ թողած կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
25. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բացակայությունների միջին թիվը, ժամ/սովորող.
26. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
27. հաստատության աշակերտական խորհրդում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը:

Հաստատության սովորողները գիտակցում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք.

28. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը.
29. հաստատության կայքում և/կամ աշակերտական թերթում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կամ հաճախորդության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, ֆոտոնկարների, և այլ հրապարակումների թիվը:

Հաստատությունում ապահովված է սեռերի, և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը.

30. սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին.
31. Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին.
32. գերազանց առաջադիմությամբ տղաների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվին.
33. տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին.
34. տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով).
35. «մաթեմատիկա», «ֆիզիկա», «հիմն» և «կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների միջին առաջադիմությունը.
36. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը.
37. աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը.
38. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը/գնահատականները.

39. անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը.
40. անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը.

41. սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը:

42. հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (գրույցներ, ֆիլմերի դիտում, ֆինանսավորումներ, կլոր-սեղաններ, սեմինարներ, էֆուլուրսիաներ և այլն):

Ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշներին և չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են և՛ փաստաթղթային ուսումնասիրություն, և՛ դիտարկում-փաստագրում, և՛ հարցումների իրականացում:

Մաս 4-ում բերված չափանիշներ 1-ից 13-ի, 16-ից 18-ի և 20-ից 22-ի և 41-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն և դիտարկում-փաստագրում կամ հարցումներ և դրանք իրականացնելուց հետո լրացնել ստորև Աղյուսակ 26-ը:

Աղյուսակ 26. Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ

Չափանիշ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում			(Եթե այո, ապա կատարել հղում:)
Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ			(Եթե այո, ապա կատարել հղում և թվարկել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումները:)
Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին			(Եթե այո, ապա նշել համապատասխան աշխատակցի տվյալները և նկարագրել պարտականությունների շրջանակը:)
Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ			(Եթե այո, ապա նկարագրել վեբ կայքի ներառական կրթության բաժինը, տեղադրված նյութերը, դրանց թարմեցման հաճախականությունը, և այլն:)
Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:			(Եթե այո, ապա նշել այդ ծրագրերը/դասընթացները, ներառված սովորողների թիվը ըստ դասարանների,

			դրանց հատկացված շաբաթեկան ժամերը ըստ դասարանների, և գնահատել դրանց արդյունավետությունը:)
Վերջին 5 տարում սնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման			(Եթե այո, ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը, և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը:)
Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը			(Եթե այո, ապա նշել վերապատրաստված ուսուցիչների թիվը, և որպես ուսուցիչ վերապատրաստող վերապատրաստված ուսուցիչների թիվը և տոկոսը: Նշել նաև վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը, և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել վերապատրաստումների արդյունավետությունը:)
Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաբաշխման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն			(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաբաշխման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար:)
Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն)			(Եթե այո, ապա բավարկել հոգեբանամանկավարժական աջակցության հաստիքերը, նշել ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառական կրթության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտականությունների շրջանակը, կրթության առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող սովորողների հետ վարվող աշխատանքները, լրացուցիչ հաստիքների կարիք և այլն: Հաշվարկել հոգեբանամանկավարժական աջակցության թիմի աշխատակիցների թվի հարաբերակցությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների թվին)
Հաստատությունում առկա են բավարար բանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար			(Եթե այո, ապա բավարկել ինչ սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ունի հաստատությունը ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար, դրանց բանակը, ձևով բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը:)
Հաստատությունում առկա են բավարար բանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր			(Եթե այո, ապա բավարկել ինչ սարքավորումներ և ուսումնամեթոդական

<p>լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար</p>		<p>նյութեր ունի հաստատությունը լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար, դրանց ֆանակը, ձեռք բերման տարերիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունն ու արդյունավետությունը և այլն: (Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը:)</p>
<p>Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն</p>		<p>(Եթե այո, ապա նկարագրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսուցման կազմակերպման պայմանները, դասասենյակների դասավորվածությունը, ինչպես նաև նրանց դասերին մասնակցության պայմաններն ու ձևերը:)</p>
<p>Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար</p>		<p>(Եթե այո, ապա նկարագրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով և ինչպես նաև ուսումնամեթոդական նյութերով, ու սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը:)</p>
<p>Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խթանող ֆիզիկական (թեֆահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները</p>		<p>(Եթե այո, ապա նկարագրել, թե ինչպես և մանրամասնել ինչ պայմաններ կան հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար օրինակ՝ թեֆահարթակ, հենակներ և այլն: Թվարկել նաև լրացուցիչ կարիքները:)</p>
<p>Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խթանող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները</p>		<p>(Կատարել հարցում պարզելու, թե արդյո՞ք հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խթանող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները: Հարցման մեջ ներառել ուսուցիչներին, սովորողներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, ծնողներին, և վարչական կազմը: Նկարագրել, հարցման արդյունքները:)</p>
<p>Անհատական ուսումնական պլանները (ԱՌԻՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը</p>		<p>(Եթե այո, ապա մանրամասնել, կարելի է բերել մեջբերումներ ԱՌԻՊ-ներից:)</p>

Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ		(Ուսուցիչների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ծնողների և վարչական կազմի շրջանում: Ուսուցիչների շրջանում հետազոտության արդյունքներով հաշվարկել նրանց թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:)
Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր		(Ուսուցիչների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ծնողների և վարչական կազմի շրջանում:)
Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից		(Ուսուցիչների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ծնողների, և վարչական կազմի շրջանում:)
Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում		(Կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերելու ուսուցիչների ունակությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների և նրանց ծնողների, ինչպես նաև վարչական կազմի շրջանում:)
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը		(Եթե այո, ապա նկարագրել, թե ինչպիսի սոցիալական աջակցության ծրագրեր է իրականացնում հաստատությունը սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար, այդ ծրագրերին մասնակից սովորողների թիվը և այլն:)

Ամփոփել ներառական կրթության և հավասարության ապահովման ուղղությամբ հաստատության հիմնական չափանիշները և ցուցանիշները, կատարել եզրահանգումներ ու առաջարկել լուծումներ դրանց բարելավման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր):

Մաս 4-ում բերված ցուցանիշներ 14, 15, 19, և 23-ից 42-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն և փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 27-ը:

Աղյուսակ 27. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2020 - 2021 ուստարի	2021 - 2022 ուստարի	2022- 2023 ուստարի
<p>Ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը (ԿԱՊԿ) և տոկոսը</p> <p>(Հաշվարկ. ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)</p>			
<p>Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և տոկոսը</p> <p>(Հաշվարկ. ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)</p>			
<p>Հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք</p> <p>(Հաշվարկ. ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ; սովորողների թիվը և տոկոսը հաշվարկել ըստ հաշվարկմանության և կարիքների տիպերի)</p>			
<p>Հաստատությունից դուրս եկած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը</p> <p>(Հաշվարկ. հաստատությունից հեռացած/ուսումն անավարտ թողած ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)</p>			

<p>ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների միջին թիվը (ժամ/սովորող)</p> <p>(Հաշվարկ. ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան ընդհանուր թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին)</p>			
<p>Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ սովորողների թիվը և տոկոսը</p> <p>(Հաշվարկ. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)</p>			
Դպրոցի աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը			
ԿԱՊԿ կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը			
Հաստատության վեբ կայքում և/կամ աշակերտական քերթում ԿԱՊԿ ունեցող անձաց կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, ֆոտոնկարների, և այլ հրապարակումների թիվը:			
Աշակերտական խորհրդի կազմում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը			
Սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին			
Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին			
Գերազանց առաջադիմությամբ տղաների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվին			
Տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին			
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)			

«Մաքենատիկա», «Փիզիկա», «Բիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների միջին առաջադիմությունը/տարեկան գնահատականները			
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը (Հաշվարկ. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)			
Առակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը			
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը/գնահատականները			
Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. անվճար դասագրքեր ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)			
Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. անվճար սնունդ ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)			
Հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (գրույցներ, ֆիլմերի դիտում, ֆննարկումներ, կլոր-սեղաններ, սեմինարներ, էֆսիուրսիաներ և այլն):			
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը			

Ամփոփել ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման ուղղությամբ հաստատության հիմնական ցուցանիշները, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ ու առաջարկություններ դրանց բարելավման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր):

Մաս 5. Համայնֆային մասնակցություն

«Մնողները, ընտանիքները, մանկավարժները և համայնքները միասնաբար — սա է այն լավագույն համագործակցությունը, որը կարող է ապահովել, որ բոլոր աշակերտները ստանան անհրաժեշտ աջակցություն և ապահովված լինեն պահանջվող ռեսուրսներով՝ իրենց ուսման և կյանքի մեջ հաջողությունների հասնելու նպատակով:

Միջազգայնորեն տարանջատում են ծնողների, ընտանիքների, և համայնքների մասնակցության 6 ձև: Դրանք են՝

- ծնողական և ընտանեկան խնամքը, ուշադրությունը և հոգածությունը երեխայի հանդեպ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների մշտական հաղորդակցությունը (կապը) հաստատության հետ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների կամավորական բնույթի գործունեությունը՝ ուղղված հաստատությանն օժանդակելուն.
- աջակցությունը երեխային իր տնային աշխատանքների կատարման մեջ և սովորելու գործընթացում.
- ծնողների, ընտանիքների, և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացման գործընթացում.
- հաստատության համագործակցությունը տեղական իշխանությունների և համայնքների հետ:»

(NEA Education Policy and Practice Department (Center for Great Public Schools) 1201 16th St., NW, Washington, D.C. 20036)

Այսպիսով ծնողների, ընտանիքների և համայնքի մասնակցությունը համարվում է ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր միջոց: Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է երեխայի հանդեպ խնամքը, ուշադրությունը և հոգածությունը ծնողների և ընտանիքի կողմից, ներառյալ՝ ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հանախումն ապահովելը: Անհրաժեշտ է նաև ծնողների և ընտանիքների մշտական հաղորդակցությունը և կապը ուսումնական հաստատության հետ, ծնողական ժողովների կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի բացակայությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար: Մնողական և ընտանեկան մասնակցության տեսանկյունից շատ կարևոր է նաև երեխայի տնային հանձնարարությունների կատարումը վերահսկելը և անհրաժեշտության դեպքում նրան աջակցելը՝ նպաստելով երեխայի մոտ սովորելու նկատմամբ սիրո և հակումների առաջացմանը: Մնողներն իրավունք ունեն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին, սակայն մեր երկրում նրանց մասնակցության այս ձևը տարածված չէ և ծնողների մասնակցության աստիճանը երեխայի ուսումնառության գործընթացին հաստատությունում հիմնականում ցածր է:

Մասնակցության ամենատարածված ձևը Հայաստանում ծնողների, ընտանիքների, և համայնքների կամավորական բնույթի գործունեությունն է՝ հաստատությանն օժանդակելու և երեխաների համար միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Ընտանիքները, ծնողները և համայնքները հաստատությանն օժանդակում են կամավոր դրամական ներդրումներով, աշխատանքով, գույքով կամ նյութերով, ինչպես նաև միջոցառումների կազմակերպմամբ և դրանց մասնակցությամբ:

Մասնակցության առավել բարձր մակարդակի հասնելու համար կարևոր նշանակություն ունի ծնողների և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացմանը, ինչը Հայաստանում ապահովվում է հաստատության կողմից կառավարման մարմնի՝ խորհրդի, ինստիտուտի միջոցով: Խորհրդի կազմում ներառվում են հաստատության սովորողների ծնողները, մանկավարժները, տարածքային կառավարման մարմնի, նախարարության և տեղական ինֆրակառավարման մարմնի ներկայացուցիչները: Խորհրդի լիազորություններն են՝

- հիմնադրի սահմանած կարգով տնօրեն ընտրելը.
- հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը հաստատելը.
- հոգաբարձուների խորհրդի կողմից ներկայացված նախահաշիվը, ինչպես նաև նպատակային ծրագրերը ֆինանսիկելը, որոնց ֆինանսիկումներին կարող է մասնակցել հոգաբարձուների խորհրդի լիազոր ներկայացուցիչը.
- գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները լսելը և դրանց հավանություն տալը.

- հիմնադրի սահմանած կարգով հանրակրթական դպրոցի շահույթի սնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելը:

Բացի այդ ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ: Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է հաստատության կողմից իրականացված ֆայլերը, որոնք ուղղված են հաստատության և տեղական ինֆրակառավարման մարմինների/համայնքների հետ, ինչպես նաև զանազան համայնքային կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը: Ոչ միայն համայնքը պետք է ակտիվորեն մասնակցի հաստատության գործունեությանը, այլ նաև պետք է գործի հետագարձ կապը: Հաստատությունը գործուն մասնակցություն պետք է ունենա համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև սովորողներին: Այն պետք է հանդիսանա տվյալ համայնքի կրթամեթոդական կենտրոնը, լինի համայնքահեն:

Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը պետք է բացահայտի, թե որքանով է արդյունավետ սովորող - **ԻՄԱՕ**/ընտանիք - հաստատություն - համայնք համագործակցությունը և որքանով է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Մտողների/ընտանիքների և համայնքի մասնակցությունը նկարագրող ցուցանիշներին և չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են ինչպես փաստաթղթային ուսումնասիրություն, փաստագրում և դիտարկում, այնպես էլ հարցում:

Ստորև բերվում են սովորողների և նրանց ծնողների մասնակցության վերաբերյալ ցուցանիշները:

Հաստատության մթնոլորտը նպաստում է սովորողների և սնօրինության համագործակցությանը: Տնօրինությունը խրախուսում է ակտիվ սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը, խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում է դրանց իրագործմանը:

1. Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ հաստատության ղեկավարության կողմից որոշումների կայացմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
2. սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
3. սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
4. սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
5. իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլուբ - սեղանները, ֆենարկումները, դրանց թիվը, և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
6. սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերությունները հաստատությունում:

Հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինֆրավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Հաստատության աշակերտական խորհրդի իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, աշակերտների, ծնողների և սնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք.

7. Ասակերտական խորհրդի կողմից նախաձեռնած ֆայլերն՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.
8. ասակերտական խորհրդի կողմից ձևակերպված միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով.
9. ասակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները, ներառյալ՝ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները; դրանց համախափանությունը և մասնակից սովորողների տոկոսը.
10. ասակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինֆրավարության սկզբունքներին:

Հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և ասակերտական խորհրդի հետ, նպաստում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին.

11. Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.
12. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները՝ հանդեսները, հավաքները, երեկոյթները, էֆսիուսիվները, ֆանաչոզական այցերը և այլն ու դրանց թիվը; մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը
13. ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկները, դրանց թիվը.
14. ծնողական խորհրդի հանդիպումների համախափանությունը և դրանց ընթացքում ֆինանսավորված հարցերի քանակները.
15. ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անպահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, ձևերը և աջակցություն ստացող սովորողների տոկոսը.
16. ծնողական և ասակերտական խորհրդի համագործակցությունը և դրանց ձևերը.
